ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/09-2020

„06„ 02 2020թ.

ք.Արտաշատ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 6-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական դպրոցների 6-12-րդ դասարանների աշակերտների միջև 2020 թվականին ֆուտբոլի առաջնություն մարզպետի մրցանակի համար» մարզական միջոցառման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի 2020թ.
փետրվարի 2-ի թիվ 170/09 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 6-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական դպրոցների 6-12-րդ դասարանների աշակերտների միջև 2020 թվականին ֆուտբոլի առաջնություն մարզպետի մրցանակի համար» (այսուհետ՝ Առաջնություն) մարզական միջոցառման նպատակներն են՝

1) մարզում առողջ ապրելակերպի արմատավորում,

2) մարզի դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում,

3) մարզում առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում:

2. Առաջնության խնդիրներն են՝

1) մարզում ֆուտբոլի մասսայականացում,

2) մարզի դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացում, առողջության ամրապնդում,

3) մարզում առողջ կենսակերպի արմատավորում և ֆուտբոլ մարզաձևում դպրոցականների ներգրավվում,

4) մարզի հանրակրթական դպրոցներում զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Առաջնության նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան):

4. Առաջնության անցկացմանը աջակցում են Արարատի մարզի քաղաքապետարանները, համայնքապետարանները և ՀՖՖ Արարատի մարզի լիազոր ներկայացուցչությունը:

5. Առաջնությունը անցկացվում է 3 փուլերով՝ 1-ին փուլ՝ ուսումնական հաստատություններում (թիմերի կազմը ձևավորելու համար), 2-րդ փուլ՝ տարածաշրջաններում (ՀՀ Արարատի մարզի մեջ ընդգրկված նախկին Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում):

6. Առաջնության 3-րդ մարզային փուլին կմասնակցեն 3 տարածաշրջաններում 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած թիմերը:

7. Առաջնության 2-րդ և 3-րդ փուլերի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է մարզպետարանի կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

8. Առաջնության 1-ին փուլը կանցկացվի 2020 թվականի մարտի 2-15-ը՝ ուսումնական հաստատություններում:

9. Առաջնության 2-րդ փուլը կանցկացվի 2020 թվականի մարտի 20-ից մայիսի 10-ը՝ տարածաշրջաններում:

10. Առաջնության 3-րդ փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 15-ից հունիսի 1-ը: Վայրի մասին կտեղեկացվի 2-րդ փուլի ավարտից հետո :

IV. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

11. Առաջնությունը անցկացվելու է երկու տարիքային խմբերով ՝ 6-9-րդ դասարանների և 7-12-րդ դասարանների աշակերտների համար առանձին:

12. Առաջնությանը կարող են մասնակցել Արարատի մարզի հանրակրթական դպրոցների 6-9-րդ դասարանների աշակերտները՝ (հիմնական դպրոցներից) և 7-12-րդ դասարանների աշակերտները ՝ (միջնակարգ և ավագ դպրոցներից):

V. ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

13. Թիմերը պետք է բաղկացած լինեն առավելագույնը 18 խաղացողներից,1 մարզիչից: Խաղերը անցկացվելու են ՈՒԵՖԱ-ի միջազգային կանոններին համապատասխան (7-12-րդ դասարանների համար 30 րոպեանոց 2 խաղակեսերով, 15 րոպե ընդմիջումով, 6-9-րդ դասարանների համար 25 րոպեանոց 2 խաղակեսերով, 15 րոպե ընդմիջումով):

VI. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

14. Առաջնության 2-րդ փուլում 1-ին և 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած թիմերին տրվում են համապատասխան կարգի հավաստագրեր, պարգևատրվում են մարզագույքով:

15. Առաջնության 3-րդ փուլում 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած թիմերին տրվում են համապատասխան կարգի հավաստագրեր, մեդալներ, պարգևատրվում են դրամական մրցանակներով ,իսկ հաղթող թիմը պարգևատրվում է համապատասխան կարգի հավաստագրով,մեդալներով, դրամական մրցանակով և <<Մարզպետի գավաթ>> - ով :

VII. ԾԱԽՍԵՐԸ

16. Առաջնության 2-րդ փուլում մրցանակային տեղեր գրաված թիմերին հավաստագրեր, մարզագույք, ինչպես նաև մրցավարներին և բժշկին ճանապարհածախս և օրապահիկ հատկացնում է Մարզպետարանը:

17. Մրցույթի 3-րդ փուլում մրցավարներին ու բժշկին ճանապարհածախս և օրապահիկ է հատկացնում, ինչպես նաև մրցանակային տեղեր գրաված թիմերին հավաստագրերով, <<Մարզպետի գավաթ>> -ով և դրամական մրցանակներով պարգևատրում է Մարզպետարանը համապատասխանաբար 7-12-րդ դասարրանների խմբում ՝

1) 1-ին տեղ ՝ 300.000 ՀՀ դրամ,
2) 2-րդ տեղ՝ 200.000 ՀՀ դրամ
3) 3-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ:

Նշված գումարներից ՝ 70%-ը՝ թիմի մասնակիցներին, 20%-ը թիմի մարզիչին, 10%-ը թիմը ներկայացնող դպրոցին:

Իսկ 6-9-րդ դասարանների խմբում ՝

1) 1-ին տեղ ՝ 250.000 ՀՀ դրամ,
2) 2-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ
3) 3-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ:

Նշված գումարներից ՝ 70%-ը՝ թիմի մասնակիցներին, 20%-ը թիմի մարզիչին, 10%-ը թիմը ներկայացնող դպրոցին:

18. Նշված ծախսերը կատարվում են ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցների հաշվին:

VIII. ՀԱՅՏԵՐԸ

19. Առաջնության 2-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժին մինչև 2020 թվականի մարտի 20-ը:

20. Մասնակցության հայտերի հետ մրցավարական հանձնաժողովին է ներկայացվում՝

1) ծննդյան վկայական կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,

2) ուսումնական հաստատության ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ լուսանկարով, առ այն, որ անձը սովորում է տվյալ ուսումնական հաստատությունում,

3) բժշկի թույլտվություն:

4) Թիմի մասնակիցներից առնվազն մեկի մասով վերոնշյալ պահանջները չկատարելու, կեղծիքի արդյունքում թիմի կազմում հայտնվելու կամ խաղի ընթացքում կարգապահական կանոնները անտեսելու դեպքում մարզպետարանի կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը իրավասություն է ունենալու զրկելու տվյալ թիմին առաջնությունը շարունակելու իրավունքից :

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ